

Սվետլանա Մանուչարյան  
 Բ.Գ.Թ.,  
 Գորիսի պետական համալսարան  
 Հայաստան

**Անտառագիտ.** Գուսան Աշոտի բարբառային տաղերում առկա հնչյունական իրողությունները հայերենի տարբեր հնչյունական օրենքների և հնչյունափոխական երևույթների դրսևորումներ են, որոնք ընդհանրապես բնորոշ են Ում ճյուղի բարբառներին: Գորիսի և Ղարաբաղի խոսվածքներին հատուկ հնչյունական և հնչյունափոխական երևույթները (Աճառյանի օրենք, ձայնավորների ներդաշնակություն, բաղաձայնի քմայնացում, վերջընթեր շեշտի ներգործությամբ հնչյունափոխություն, հնչյունների հավելում և անկում) ոճական կիրառմամբ հնչյունական բարբառայնություններ են ստեղծում տաղերում: Հնչյունական իրողությունների բարբառային տարբերակները գուսանական չափածոյի գեղարվեստական պատկերին բնականություն և արտահայտչականություն են հաղորդում:

**Բանալի բառեր`** տաղ, հնչյունական օրենք, հնչյունափոխություն, Գորիսի խոսվածքներ, բարբառայնություններ, հնչյունների անկում:

Հայերենի հնչյունական իրականությունները կարող են տարբեր կերպ դրսևորվել նույն գրողի երկերում` պայմանավորված դրանց բնույթով, ինչն էլ յուրօրինակություն է հաղորդում տվյալ հեղինակի լեզվարվեստին: Գուսան Աշոտը ստեղծագործել է ոչ միայն գրական, այլև ժողովրդախոսակցական ու բարբառային տարբերի համադրմամբ: Նրա` ամբողջությամբ կամ մասամբ մայրենի խոսվածքով արարված տաղերից են` «Չոլ չոլերը ծաղկալ են» [ԳՄ, էջ 134], «Իմ յարը մի դյանայա» [ՄԿ, էջ 114], «Ակներ յայլան Դադալունց» [ԼԿ, էջ 35], «Հանանք վրեչ մրեր ծորան» [ԼԿ, էջ 49], «Մհաջառի քեղուտում» [ԼԿ, էջ 88], «Մանամ բաջի» [ԼԿ, էջ 90], «Տախձոյտի ջեյրան» [ԼԿ, էջ 105], «Կեծակն էլ ա երք պյուրում» [ԼԿ, էջ 113], «Մարյամ աքեր» [ԼԿ, էջ 98], «Նանի, նանի» [ԼԿ, էջ 172], «Ախր ցորտն ինձ հինչ կանի» [Ծ, էջ 201], «Թոխպը-թխպին թն տված» [Ծ, էջ 231]: Գուսանի մայրենի խոսվածքը Գորիս քաղաքի խոսվածքն է, որն, ըստ Գ. Ջահուկյանի, ներառվում է Ղարաբաղի բարբառի մեջ, ըստ Ալ. Մարգարյանի` Գորիսի:

Հայտնի է, որ Գորիսի խոսվածքների հնչյունական համակարգը տարբերվում է արդի գրական լեզվից, և այն զգալիորեն արտացոլվել է հիշյալ տաղերում: Բարբառային բնույթի գրվածքներում որոշակի կշիռ են կազմում քմայնացած հնչյուններ ունեցող բառերը, որոնք ձևավորվել են հնչյունական տարբեր օրենքների ազդեցությամբ: Սյունիք-Արցախ բարբառային միավորներում լայն ընդգրկում ունեցող Աճառյանի օրենքի գործառման արդյունք են հետևյալ բնագրային օրինակները, որոնցում քմային ձայնավորին նախորդող ձայնեղը վերածվել է խուլի կամ շնչեղ խուլի, կամ էլ դրանց քմային տարբերակի, ինչպես` **ա>Ա**` «Յայլա սարի նվախտը օրիշ **պյան** [**պԱն**] ա... » [ԼԿ, էջ 35], «Աշկ ենք պացալ [**պԱ ցԱՂ**]...» [ԼԿ, էջ 49], «...տանտ տյուռնը **պյաց** [**պԱ ց**] ըրա» [Ծ, էջ 201], «Նանի, Նազին կեռինջ **պյաշան** [**պԱ շԱն**] հեփ կիկա» [ԼԿ, էջ 172], «...հունց են խառնվում **կյառները**, [**կյառները**] » [ԼԿ, էջ 35], Բու շիկավը շողն ըրեփի պար **կկյա** [**կըկյա**] [ԼԿ, էջ 49], «Յար կուրցրածի քոն չի **կկյա** [**կյա**]» [Ծ, էջ 231], **ու>ու**` «Տյու [**տու**] »<sup>1</sup> ժառանգն ես Դադալունց...» [ԼԿ, էջ 35], «Տյու [**տու**] իմ սագի լուգուն էս» [ԼԿ, էջ 49], «Յար, էն վեր **պյու** երգեցիր, ակնին **ճյուրը** [**ճուրը**] քյունյումա» [ԼԿ, էջ 88], «Մրտիտ քարը տեն քիցի, տանտ **պյուռնը** պյաց ըրա» [Ծ, էջ 201], **ո>Օ**` «Հազար սրտի խաղ եմ կապալ էս **ժյուրան** [**ծորան**]» [ԼԿ, էջ 49], «Ղաբուլ ա վեր սարում, **ժյուրում** [**ծորում**] քեզ մաշես» [ՄԿ, էջ 114], «Մերտ սրտին **կյուտկալը** [**կյուտկալ**] ծալ-ծալ եկու» [ԼԿ, էջ 172] և այլն: Հարկ ենք համարում հավելել, որ ինչպես Վան-Վասպուրականի խոսվածքներում, այնպես էլ Սյունիք-Արցախ տարածաշրջանի խոսվածքներում հնչյունական այս օրենքի տարածման փուլի արդյունք է

<sup>1</sup> Ուղիղ փակագծերում տրվում են բարբառային հնչյունները` համաձայն ներկայումս ընդունված տառադարձման [տե՛ս 1, էջ 5-22]:

ոչ ձայնեղների մոտ ձայնավորի քմայնացումը, օր.՝ լից հետո **ա**-ի առկայությունը՝ **լավ, լաց**՝ «Ըշխարքավ մին չավ եմ ըրալ, **լավ** [ **լավ** ] ջան ա» [ՄԿ, էջ 114], «Թըխպոտում ա, թըսխոտում **լացին** [ **լացին** ] տամ» [ՄԿ, էջ 114] և այլն: Ընդհանրապես այս և նման հնչյունական իրողությունները, որոնք որևէ գրողի երկում ոճական նպատակադրմամբ են կիրառված, ժողովրդայնություն կամ բարբառայնություն են հաղորդում դրան՝ կախված համատեքստից:

Գուսան Աշոտը չի խուսափել գործածել նաև բառակազմի ձայնեղների խլացման կամ շնչեղ խլացման օրինակներ. **բ>պ**՝ «...վշխարին կիթ **պիթիթ**» [ԼԿ, էջ 35], **գ>կ**՝ «...էն ցորտ ըխալիրի կլիսին...» [ԼԿ, էջ 35], **դ>տ**՝ «Յար, չքինաս էս թաղան, սիրոս քար չի՝ **տիմանամ**» [ԼԿ, էջ 105], «Հենց **տրանա** յա, թենց արշա կյամ երբերդ» [ՄԿ, էջ 114], «**Տուրտուղում** եմ, սրսթում, աշկս **տիռնիտ** պռավեց» [Օ, էջ 201], **ջ>ճ**՝ «Էն **ճիրերի** ցուրունը իմ հավասս պյուրում ա» [ԼԿ, էջ 88], «Հագար փերու միջին սերս **ճոկվում ա**» [ՄԿ, էջ 114], **ձ>ձ**՝ «Ետ կյամ, **ձեր** հերթավն ինգեմ...» [Օ, էջ 201], կամ՝ **բ>փ, գ>ք**՝ «Էսչանք վարար թոռ կինի, **փոնեմ քինում** երկինքը» [Օ, էջ 201], «Մերս **քինաց** սեր կապած, մեր ծորնիեր խրխման» [Օ, էջ 231] և այլն: Նմանատիպ օրինակները, ըստ Ա. Ղարիբյանի՝ հայ բարբառների դասակարգման համար առաջադրած հնչյունական սկզբունքի, ձևավորվել են ձայնեղների առաջին տեղաշարժմամբ, ինչը ևս հատուկ է Ղարաբաղի բարբառին:

Գուսանի կիրառած լեզվանյութում առկա են նշված հնչյունական իրողության մասնավոր դեպքեր, ինչպես՝ **գ>ճ > կ>ք > ք** անցման օրինակներ՝ **գիտեմ-ճոնդոմ**՝ «Իրանց խալխը **ցյուղում** են [ **ճոնդոմ** ], վեր ինձ սիրում ա» [ԳՄ, էջ 134], **գնամ-քինալ**՝ «**Քինամ** [ **քինամ** ] խառնվեմ

յայլումին...» [ԼԿ, էջ 35], «Մերս **քինաց** [ **քինաց** ] սեր կապած...» [Օ, էջ 231], **գիշեր-քիշեր**՝ «Էն հինչ ուրախ **քիշեր** եր...» [ԼԿ, էջ 88] և այլն: Հնչյունական մասնավոր անցման օրինակ է նաև խուլերի ձայնեղացումը բաղաձայնական դիրքում, ինչը ևս բնորոշ է Ղարաբաղի և Գորիսի խոսվածքներին, այսպես՝ **տ>դ**՝ **գիտել > գիտող > գիղծղ**՝ «Սիրտը մաքուր, պան **գիղղ** [ **գիղծղ** ] մըն խանում ա» [ԳՄ,

էջ 134], կամ **պ>բ**՝ **դեպի > դիբի // դիրմ // բիրմ** [տե՛ս 6, էջ 82]՝ «Տեսնում չես կուղվարած **դիբա** քեզ եմ

պյուն-պյունում [ պետք է մ լինի ]» [Օ, էջ 201] Խուլ շփական **ս**-ի **շ**-ի հնչյունափոխվելը **խսկի > իշկի** [Ղարաբաղում և Գորիսում նաև՝ **ըսկի, ըշկի**] մակբայի կազմում ևս մասնավոր է, օր.՝ «**Իշկի** կյամ չի, էս **խե**՝ էսենց ինձ խանչում ա» [ԳՄ, էջ 134]: Այս բանատողը ներառում է բարբառային **խե**՝ «ինչո՛ւ» դերանունը, որը սերում է գրաբարյան **հի՛մ** ձևից, որը **հի** արմատի տրական հոլովածն է [տե՛ս 3, էջ 92], ինչը, կարծում ենք, ենթարկվել է **հ>խ** անցման, ապա՝ **ի>է**: Ի լրումն այս ամենի՝ նշենք, որ բառակազմի **հ>խ** փոփոխությունը հատկանշական է **ԼԻՄ** ճյուղի բարբառներին, ինչպես՝ Խոյի-Սալմաստի, Մարաղայի:

Գուսան Աշոտի՝ բարբառային բնույթի տաղերում զգալի կշիռ են կազմում հնչյունական մեկ այլ իրողությամբ՝ ձայնավորների ներդաշնակությամբ ձևավորված օրինակները՝ **լեզու > լիզու] - լոնզոն**՝ «Տյու [տոն] իմ սագի **լուզուն** [ **լոնզոն** ] էս» [ԼԿ, էջ 88], **բերում-պոնրոմ**՝ «Էն ճիրերի ցուրունը իմ հավասս **պյուրումա** [ **պոնրոմ** ] » [ԼԿ, էջ 89], «Մեր եմ օգում քանա, բա ին դարդ էս տյու պյուրում [ **պոնրոմ** ]» [Օ, էջ 201], **գնում-քոն ցոն**՝ «Յար, էն վեր տյու երգեցիր, ակնին ճյուրը **քունյումա** [ **քոն ցոն** ]» [ԼԿ, էջ 88], **ջրում-ճոնրոմ**՝ «Հագար բոստան, հագար արտ, խաղ կանչիլավ **ճյուրումա** [ **ճոնրոմ** ]» [ԼԿ, էջ 88], **գիտեմ > գիղում] - ճոնդոմ**՝ «Իրանց խալխը **ցյուղում** են [ **ճոնդոմ** ]...» [ԳՄ, էջ 134], **գարում-կոնրոմ ցքվա**՝ «**Կյուրումքվա** [ **կոնրոմ ցքվա** ] սեր հեղեղ ա» [Հ, էջ 69], «Քինանք ման կյանք **Կյուրումին** [ **կոնրոմ սի** ] բըլվարումը» [ԳՄ, էջ 134], **դողդողալ-տոնրսոդալ // տիրսոդալ**՝ «**Տուրտուղում** եմ, սրսթում, աշկս տիռնիտ պռավեց» [Օ, էջ 201] և այլն: Ընդգծված բառաձևերում շեշտահաջորդ **ու**-ի հետընթաց լրիվ առնմանությամբ շեշտակիր ձայնավորը դարձել է շրթնային, այսինքն՝ բառի ձայնավորները ենթարկվել են շրթնային ներդաշնակության, ապա՝ քմայնացել են, բացառությամբ վերջին օրինակի, որը գուսանական երգերում հանդիպում ենք առանց քմայնացման, չնայած Գորիսի խոսվածքներում այն քմայնանում է: Տաղերում ուշագրավ են նաև զուտ շրթնային ներդաշնակության օրինակները՝ **խուսցնէլ-խուսուցրի**՝ «**Մուսուցրի** միալ չրավ, մորգած էր, հինչան ա՛» [Պեյլակին], **ըրօտալ-ուրօտում, ուրօտաց**՝ «Կեծակա տամ, **ուրօտում**, սարը տըղահան ըրավ» [Օ, էջ 201], «Մըն թոխս օր էր

կյուրունքվա, աստուծ էն հունց ուրուտաց»[ԼԿ, էջ 113], անջուկ-ունջուկիս՝ «Մասը մնաց ունջուկիս կարոտների ծով կապեց»[ԼԿ, էջ 113], նան֊փոխառյալ ումբբը[Ղրբ.՝ *oumbr*] [h.ե. \**ōmōr*, արաբ.*omr, umr*] [11, էջ 754]-ումբուր՝ «Իմ ումբուրը տվալ եմ իմ սիրածին»[ՄԿ, էջ 114] և այլն: Ոճականորեն հնչյունական նմանաբնույթ իրողությունները ստեղծում են հնչյունական բարբառայնություններ[տե՛ս 10, էջ 60 ]: Հնչյունական բարբառայնություններ ենք համարել նշված հնչյունական երևույթների ազդեցությամբ քմայնացած բաղաձայնների առկայությունը բնագրերում, որոնք Գուսանն արտահայտել է ոչ թե տառադարձմամբ, այլ տվյալ հնչյունին հաջորդող յ գրանշանով՝ աշխատելով ճշտորեն պահպանել մայրենի խոսվածքի արտասանությունը, այսպես՝ «Թխպի տական լուսինգյան էն մեր սերավ սյուլ կիկար»[ԼԿ, էջ 88], «Տյու կյուրունքան կյանք առար»[ԼԿ, էջ 113], «Ըշխարքավ մին չավ եմ ըրալ, յլավ ջան ա»[ՄԿ, էջ 114], «Երբերս տամ ծյուրերին...»[Մ, էջ 231], «Սեր եմ օգում քզանա, բա խե դարդ էս սյու սյուրում» [Մ, էջ 201], «Հյուշ հենա տաք ջանիտ, լավ գյուրիցիտ լավ խաղիտ» [Մ, էջ 201] և այլն:

Քնարերգության մեջ ընդհանուր առմամբ բարբառային բառեր՝ ճիշտ և ըստ հարկի գործառությունը պայմանավորված է հանգավորմամբ, բարեհնչունությամբ տաղաչափական այլ խնդիրների լուծմամբ, ինչպես և դրանք «...կարող են հանդես գալ ժամանակաշրջանի, միջավայրի գունավորում ստեղծելու դերով» [9, էջ 126]:

Հնչյունական բարբառայնություններից է փոխառյալ քմային բաղաձայնների, նան նԱ փԱ ս [արաբ. *nafas, թրք. nefes*] [11, էջ 553] բառում **ֆ**-ի փոխարեն **փ**-ով գործածությունը [վերջինս բացատրվում է այն հանգամանքով, որ **ֆ** հնչույթը բացակայում է Ղարաբաղի և Գորիսի խոսվածքներում], օր.՝ «էն քաղցր նեփասին մատաղ իմ յարի, Մըն կիտարա կյուրունքվա գյուրեհարումը»[ԳՄ, էջ 134], «Խաղս ասեմ, քեփս քյոք ա, լավ դամ ա, Աշըղ, ածի ուրախ մըն թարաքյամա... Վեչխարդ թող մեր գյունումը ըրածի»[ԳՄ, էջ 134], «Ըշխարքումս իմ յարը մին դյանա յա»[ՄԿ, էջ 114] և այլն:

Կարծում ենք, որ գրողի երկում հնչյունական տարբեր իրակությունները քննության ենթարկելիս, որպես վերհատույթային միավոր՝ էական նշանակություն ունի նան բառային շեշտ: Տաղերգուն գործառել է նան բարբառային վերջընթեր շեշտի ազդեցությամբ ձայնավորների հնչյունափոխ տարբերակներով բառաձևեր, որոնք հասկանալի են մասնավորապես Ղարաբաղի և Գորիսի խոսվածքներին, ինչպես ու>օ՝ ուրիշ-օրիշ, ցուրտ-ցորտ, թուխայ-թօխայ, քուն-քոն, շուր-շուր, տուն-տոն, ուտել-օտել «... օրիշ պյան ա, այ խիպեր»[ԼԿ, էջ 35], «...էն ցորտ ըխպիրի կլիսին » [ԼԿ, էջ 35], «Մարին լացող թոխայն էլ էն ըրելի դարդան ա»[ԼԿ, էջ 35], «Օգ կծածին քոն կիկա»[Մ, էջ 231], «Յարի շոխկին շուր կիկա»[Մ, էջ 231], «Յարի շոխկին տոն կիկա»[Մ, էջ 231], «Քեղի գոխը իմ պապը Արածանավ էր օտում»[ԼԿ, էջ 88], ի>է՝ սիրտ-սերտ, միտք-մէտկ, պինդ-պէնդ՝ «...սերա-սերտ ա, դարման ա»[ԼԿ, էջ 35], «Քանի տարի սերտը թաքուն յար ասի» [ԼԿ, էջ 172], «Սերտը կոտրած, փշրված»[Մ, էջ 231], «...հուշս, մետքս, հենա ընդեղ»[ԼԿ, էջ 35], «Մին պենդ խտի փշաշեմ...» [Մ, էջ 201], ի>ը՝ մի-մըն՝ «Նրա տեղն հու կտա՝ մըն արև, մըն հեր ու մեր»[ԼԿ, էջ 35], «Աշըղ, ածի ուրախ մըն թարաքյամա» [ԳՄ, էջ 134], ե>ը՛է՝ քեզ-քէ գ, մեր-մէ բ, պես-տէ ս՝ «Ա՛յ իմ նախշուն, քրեզ քէ գ խոսվքը սագում չի»[Հ, էջ 69], «Մաս-սասի տանք, սրտեր պանանք կյուրունքվա տրես տէ ս» [Հ, էջ

69], «Հոանանք վրեչ մրեր մէ բ նշխարար էս ծորան» [ԼԿ, էջ 50] և այլն: Մասնավոր փոփոխություն է

**ո>ու** անցումը՝ «Քու ջիգարդ կրակին տաս թենց խաշես»[ՄԿ, էջ 114] և այլն: **Ո>ու**՝ հնչյունափոխությունը հիշյալ խոսվածքներում հիմնականում ընթանում է շեշտանախորդ դիրքում՝ «Երբերս տամ ծյուրերին [**ծուրերիՈ**]» [Մ, էջ 231], «Յար կուրցրածի քոն չի կյա» [Մ, էջ 231], «Կեճակա տամ, ուրտում, սարը տըղահան ըրավ» [Մ, էջ 201], «Տեսնում չես կուղվարած դիբա քեզ եմ պյուն-պյունում [պետք է մ լինի]» [Մ, էջ 201] և այլն: Հիշյալ խոսվածքներին հաստուկ հնչյունական երևույթների ընդհանրական և մասնավոր կիրառությունները գուսանական տաղերին ոչ միայն բարբառայնություն են հաղորդում, այլև արտահայտչականություն: Սակայն քննվող լեզվանյութում քիչ չեն նան այնպիսի հնչյունական դրսևորումները, որոնք իրենց հերթին նպաստում են տաղերի լեզվի ժողովրդայնությանը, քանի որ դրանց մի մասը, հաստուկ լինելով տարբեր բարբառային միավորների, ներկայումս ժողովրդախոսակցական բնույթ ունեն: Այսպես, այ>է անցումը բնորոշ է **Ում** ճյուղի բարբառներին ընդհանրապես, օր.՝ այրել-երել, կայծակ-կէծակ, հայր-հեր, այն-էն, այսօր-էսօր և այլն՝ «... մըն հեր ու մեր»[ԼԿ, էջ 35], «Ասեց ինձ տար, հերս հեն ա վարումը»[ԳՄ, էջ 134],

«Կարոտն էրող կրակ ա, քարերն էրող կեծակ ա» [ԼԿ, էջ 35], «Մարին լացող թոխպն էլ էն ըրելի դարդան ա» [ԼԿ, էջ 35], «Ախր էսօր խումար աշկտ կանչում չի» [ԼԿ, էջ 49], «Մեր ենք առալ, շափաղ առալ էս ծորան» [Հ, էջ 69]: Հնչյունական այս անցմամբ է ձևավորվել **կեծին տալ** «1. տաքանալ, 2. բորբոքվել» հարադիր բայի հարադիրը՝ **կայծ>կեծ** [տե՛ս 6, էջ 64] «տաք»՝ «Քիչ եմ սիրում, պրոնգնում ա, կեծին տալ» [ՄԿ, էջ 114]: Նշենք, որ ինչպես **այ** երկբարբառի, այնպես և մյուս երկբարբառների պարզեցումը պատմական հնչյունափոխության արդյունք է, որը հանգեցնում է նյութի տարածամանակյա քննության: Առանձնացրել ենք **ոյ** և **իւ** երկբարբառների **ու**-ի, **եա**-ի՝ **ա**-ի վերածման օրինակներ, որոնք, բնականաբար, Սյունիք-Արցախ բարբառային միավորներում քմայնանում են՝ **լոյս>լուս, ոյր>հուր, ոյց>հունց շոյտ>շուտ, իւրեան>ուրան**՝ «Մաստ հենա ունջիկիս, լուս ախայուրա քլլան» [Օ, էջ 201], «Օրհնած եկավ, լուս ա կաթում սուրաթից» [ՄԿ, էջ 114], «Քեզ տեսնողը կասի էս **իւրը** բալա յա» [ԳՄ, էջ 134], «Բա վեր կյա ոչ, թայթուշի մոտ **իւ**նց կանեն» [ԳՄ, էջ 134], «Մանամ բաջի, **ուրան** տեսար խաղը լուզվին եկու քինաց» [ԼԿ, էջ 90], «Ղուշի նման **ուրան շուտ-շուտ** կոկում ա» [ՄԿ, էջ 114] և այլն:

Գուսան Աջոտի վերոնշյալ տաղերում հաճախադեպ է օժանդակ բայի երրորդ դեմքի **է**-ի փոխարեն **ա**-ի առկայությունը, որը ոճականորեն առձայնույթ է հանդիսացել «Չոլ չոլերը ծաղկել են» և «Իմ յարը մին դյանա յա» գործերում, ընդ որում այս տաղերում **ա**-ն և ձայնավորային հորանջը փակելու միտմամբ առաջացած **յա**-ն կիրառել է հանգավորման համար՝ որպես վերջնահանգ, այսպես՝ «Իրանց խալխը գյուղում են, վեր ինձ սիրում **ա**, Վեր խաղ **ա** ասում, մարդի քեփը բերում **ա**, Կանչեմ, շուտ գա, սերը սիրտըս քերում **ա**, Մին գա լրսի հինչ եմ ասում լարումս» [ԳՄ, էջ 134], «Ըշխարքումս իմ յարը մին դյանա **յա**, Թագա ռեհան, թարխուն, շուշան, նանա **յա**» [ՄԿ, էջ 114] և այլն: Հարկ ենք համարում նշել, որ **ու**մ ճյուղի բարբառներում օժանդակ բայի երրորդ դեմքի **է**-**ա** փոփոխությունն ընդհանրական է, ինչը բացատրվում է **է>է** [բաց է]>**ւ**>**ա** հաջորդական անցմամբ, երբ «է-ի արտասանության ժամանակ բերանի բացվածքի աստձանական լայնացումով ստացվում է օժանդակ բայի **ա**-ն, ճիշտ հակառակը այն ընթացքի, որ բարբառները ցուցաբերում են **ա**-ից է առաջացման՝ **բան>պն ն>պէ ն>պէն**, այս դեպքում արդեն **ա**-ի արտասանության ժամանակ բերանի բացվածքի աստիճանական նեղացմամբ» [4, էջ 60], օր.՝ «Էն ախճկան շատ հավան **ա** իմ նանի, Ասում **ա**՝ ում վեր լավ յար ունի՝ դարդ չոնի» [ԳՄ, էջ 134], «Օիլի պտկին էն Ղուշն էլ **ա** մեր Ըշոտի խաղերն ասում» [ԼԿ, էջ 90] և այլն: Քննվող հնչյունական անցման արդյունք է նաև **թե-թւ** հնչյունափոխ ձևը՝ «Համ էլ գիղամ՝ **թա** [թւ] վեր մետքը կյալի յա» [ԳՄ, էջ 134], «Աշուղ Աշոտ նրա ճամփին **թա** [թւ] վեր չան-չան թոխպ չպատի» [ԼԿ, էջ 98]: Տեղին է նշել, որ **ամեն>աման** բառի **է**-**ա** փոփոխությունը բացատրելի է շեշտակիր **ա**-ի առնմանությամբ, օր.՝ «Այ պելակին, գուղում ես թա **աման** մըն տեղ լավ ջան կա՝» [Օ, էջ 231]: Գուսանի գործերին բարբառայնություն են հաղորդում բառասկզբի **ո**-ի **վէ**-ի վերածման օրինակները՝ **վեր/վէր, վէ/վէչ, վէխար, վէսկի**՝ «Համ էլ գիղամ թա **վեր** միտքը գալի յա»

[ԳՄ, էջ 134], «Կարմիր ձին եմ նստել, **վեր** ինձ շուտ տանի» [ԳՄ, էջ 134], «**Վրեր** [վէր] թխպում ես, էս դրախտն էլ նախշուն չի» [ԼԿ, էջ 49], «Բա **վեր** կյա ոչ, թայթուշի մոտ **իւ**նց կանեն» [ԳՄ, էջ 134], «Հռանանք **վրէչ** [վէչ] մրեր նշխարար էս ծորան» [ԼԿ, էջ 50], «**Վէչխարդ** թողը մեր գյունումը ըրածի» [ԳՄ, էջ 134], «Ղուշը կանչեց սլալաց հասկը **վէսկի** դյան փոեց» [ԼԿ, էջ 113], նաև՝ **ո**>**ու** անցման, որին էլ հաջորդել է **հ**-ի հավելումը՝ **ով>ուվ>հու** [6, էջ 52]՝ «Տեսնաս **իւ**վա՝ ցորտ խոսք ասալ, ունքամէչը պաց» [Պեղակին], կամ՝ «Յարաբ էն **իւ** սարաբ տառավ, նրանց տյուռնը պաց ըրի» [Պեղակին], «**Հու** յեշում ա, ռամուզը փոխվում ա» [ՄԿ, էջ 114]:

Հնչյունական վերոբերյալ իրողություններով կազմավորված բարբառային բառաձևերը ոչ միայն ոճավորում են հեղինակի խոսքը, նպաստում գրական կոլորիտի ամբողջականացմանը, այլև հատուկ լինելով քնարական հերոսի լեզվամտածողությանը՝ գեղարվեստական պատկերը դարձնում են շարժուն ու բնական, կերպարներին՝ տիպական ու կենդանի:

Հնչյունափոխական երևույթներից Գուսանի տաղերում քննել ենք նաև շեշտանախորդ ձայնավորի սղումը կամ **ը**-ի վերածումը, այսպես՝ **ա**>**ը**՝ «Ըշխարքումս իմ յարը մին դյանա յա» [ՄԿ, էջ 114], «... էն **ըրեվի** դարդան ա» [ԼԿ, էջ 35], «... էն ցորտ **ըխալիքի** կլխին» [ԼԿ, էջ 35], «Մերըտ քամի, երբ **ըրա**...» [ԼԿ, էջ 35], «Լափու տուվավ, սասը հսավ **ըրարքին**» [ԼԿ, էջ 49], «... ունքամէչտ պաց **ըրա**» [ԼԿ, էջ 49], «... հի՛նչ կտանես **ըշխարքան**» [ԼԿ, էջ 50], «Այ **ըրևան** այ խալխը» [Օ, էջ 231], «Միշտ երգ

իլ տամ Ըշոտիս, Ըովետվա լավ նվախտը» [Օ, էջ 231], նաև՝ **ե>ա>ը**՝ «Ըրագիս վեր փախչում ես, ալակ-սալակ եմ տյառնում» [ԼԿ, էջ 105], **ե>ը**՝ «Մա էլ խե էս հռանում կրակ մաղում իմ գլխին» [ԼԿ, էջ 105] և այլն: Հայտնի է, որ ձայնավորների սղումը տեղի է ունենում նաև բառաձևան ժամանակ, ինչի արդյունքում հնչյունական նոր դիրքով պայմանավորված կարող է հնչյունափոխվել բաղաձայնը: Այսպես՝ **թոնիր** բառը Գորիսի խոսվածքներում գործառում են **թորեն** տարբերակով, որն առաջացել է **ն-ր** դրափոխությամբ, իսկ հոլովման կամ բառաբարդման ժամանակ [օր.՝ **թոնի, թրոնաճԱՂ**] է-ի սղման հետևանքով ռնգային **ն-ի** առնմանությամբ **ը-ն** դառնում է բազմաթիվ **ռ**. այս օրինակը գտնում ենք Գուսանի մոտ՝ «Թոռնի համ ու հոտով աքեր, տյու սուրփ անուն ջիգյարավ քույր» [ԼԿ, էջ 35] և այլն:

Անդրադարձել ենք նաև Գուսան Աշոտի խնդրո տաղերում տեղ գտած փոխադրեցական հնչյունափոխության դեպքերին, որոնցից է **հ-ի** հավելումը, օր.՝ **ուշ[ը]-հու/ՈՒ շ**՝ «...հուշս, մետքս, հենա ընդեղ» [ԼԿ, էջ 35], «Հյուշս հենա տաք ջանիտ, լավ գյուրիցիտ լավ խաղիտ» [Օ, էջ 201], **ոնց** [ <ոյց>-**հունց**՝ «Էն չորանն էլ շվավը հունց կանչում ա» [ԳՄ, էջ 134], «Բյուրկներին վխարի հունց են խառնվում կյանները» [ԼԿ, էջ 35], **ինչ-հինչ**՝ «...հի՞նչ կտանես ըշխարքան» [ԼԿ, էջ 50], « Գընամ տեսնեմ իմ յարը հի՞նչ պանի յա» [ԳՄ, էջ 134], **ինչքան-հիշքան**՝ «Հիշքան էլ վրեր չաղուն ինի, Նարգիզս» [ԼԿ, էջ 49], **եռ-հեռ**՝ «Աշըղ Աշոտ, տեղն ա հինչքան հեռ քաշես» [ՄԿ, էջ 114], **երդ-հերթ**՝ «Ետ կյամ, ծեր հերթավն ինգեմ, տեսնամ քուլա ծոցդ պյաց» [Օ, էջ 201] և այլն: Հնչյունների անկումը, որը հավելման հակառակ երևույթն է, ևս գործուն իրողություն է Գորիսի և Ղարաբաղի խոսվածքներում: Տարբեր բաղաձայնների կորուստ կրած օրինակներից են՝ **լինել>ինի, ինչքան>հիշքան**՝ «Հիշքան էլ վրեր չաղուն ինի, Նարգիզս» [ԼԿ, էջ 49], «Էս չանք վարար թոռ կինի...» [Օ, էջ 201], **անկանել>ինգել**՝ «Ետ կյամ, ծեր հերթավն ինգեմ» [Օ, էջ 201], «Մին պենդ խտի փշաշեմ, հենեմ խուրդուն կետն ինգած» [Օ, էջ 201], **դուրս>տՈՒ ս**՝ «Թխյի տական լուսինգյան էն մեր սերավ տյուս [տՈՒ ս] կիկար» [ԼԿ, էջ 88] և այլն: Գուսանի տաղերում զետեղված բարբառային բառաձևերը երբեմն տարբեր հնչյունափոխական երևույթների հետևանք են, օրինակ՝ **Ասսու** [ <ասծո//ասծու<աստծո//աստծու] [տե՛ս 7, էջ 131]՝ «Ասսու տուված տան դովլաթ ես...» [ԼԿ, էջ 50], որն ամփոփման [հասլոլոզիա], արագաբանության, առնմանության, ապա և հնչյունի տարրալուծման արդյունք է: Ամփոփման օրինակ են նաև **ա քեր** [ <հաքեր<հաքուր//հոքուր<հաւաքոյր]՝ «Մայրամ աքեր, տու լուս տառնաս» [ԼԿ, էջ 99], **թորը** [ <ոթ <դուր <ընդ+ուր]՝ «Մայրամ աքեր, դարդ իմացող Նաղաշ յարս թորը քինաց» [ԼԿ, էջ 98] **տեն** [ <դեն<դայն<ընդ+ այն] [6, էջ 112]՝ «Մրտիտ քարը տեն քիցի, տանտ տյուռնը պյաց ըրա» [Օ, էջ 201], ինչպես և **նրհենց** «այնպես», **թրհենց // թենց** «այդպես» դերանունների տարբերակները՝ «Նհենց զրնգա դրնգա» [Օ, էջ 231], «Էտ խեյ ես թհենց տազ ըրալ» [Օ, էջ 201], «Հենց տրանա յա, թենց արշա կյամ երքերդ» [ՄԿ, էջ 114], որոնք, կարծում ենք, կազմավորվել են Ղարաբաղի բարբառում առկա **հանց/հենց** [տե՛ս նաև 11, էջ 410] դերանունից, որը կար նաև միջին հայերենում **[հանց** «այնպես, այնպիսի» [տե՛ս 5, էջ 407]], **այն+հանց>ընդրհենց/ընդենց>նրհենց** և **այդ+ հանց>ըտրհենց>տրհենց/ ըտենց>թրհենց>թենց** հաջորդական անցմամբ: Նշենք նաև, որ **հենց** բառն էլ իր հերթին ձևավորվել է միջինհայերենյան **յայնցեղ, հայնցեղ, հանցեղ** [h[<h]+այն+ցեղ «պես, կերպ, տեսակ»] ձևերից՝ **-եղ** հնչյունամասի անկումով [տե՛ս 8, էջ 62-63] [հմմտ. **ի՞նչ ցեղ>ի՞նչ էի>ինչիս/ինչի** «ինչպես» [2, էջ 245]] և **այ>ա>է** հնչյունափոխությամբ: Հնչյունափոխական այս երևույթի, անկման և համաձուլման օրինակ է Գուսանի գործերում առկա **հենա** [ <ահա+այն է [6, էջ 228]] եղանակավորող բառը՝ «...հուշս, մետքս, հենա ընդեղ» [ԼԿ, էջ 35], «Մաստ հենա ունջիկիս...» [Օ, էջ 201], «Հյուշս հենա տաք ջանիտ, լավ գյուրիցիտ, լավ խաղիտ» [Օ, էջ 201], ինչպես և օժանդակ բայի առաջին դեմքի պահպանման օրինակ՝ **հեն էմ**՝ «Մըն պենդ խտի փշաշեմ, հենեմ խուրդուն կետն ինգած» [Օ, էջ 201]: Ամփոփման կամ հնչյունակապակցությունների կրճատման, ապա և՛ **շ-ը** դրափոխության օրինակ է Սյունիք-Արցախ տարածաշրջանի խոսվածքներում գործուն **ար շա կնլ**՝ «ծնվել, աշխարհ գալ» բայի հարադիրը՝ **աշխարհ>արշա>ար շա**՝ [8, էջ 34-36] «Հոքիդ կերավ, սերտդ մրզեց, էդ սերդ, Հենց տրանա յա, թենց արշա կյամ երքերդ» [ՄԿ, էջ 114] և այլն: Հնչյունների անկման ու հավելման վերաբերյալ իրողությունները, հարագատ լինելով տաղերգուի մայրենի խոսվածքին, ոճական կիրառմամբ հնչյունական բարբառայնություններ են ստեղծում, որոնք Գուսանի չափածոյի լեզվին պատկերավորություն են հաղորդում և նպաստում նաև հեղինակի կամ կերպարի խոսքի անհատականացման:

Փոխազդեցական հնչյունափոխության տեսակներից է առնմանությունը, երբ, օրինակ, հարակից շնչեղ խուլերից մեկի խլացումն ազդում է մյուսի վրա՝ **չք>շկ՝ աչք> աշկ** «Ախր էսօր խումար **աշկտ** կանչում չի» [ԼԿ, էջ 49], կամ ձայնեղի խլացումը՝ **ղբ> խպ՝ աղբյուր>ախպ ու ր** «Կուլան վերկալ, եկ **ախպույրը**՝ ցուրտ ջրի» [ԳՄ, էջ 134], «...էն ցորտ **ըխպիքի** կլխին» [ԼԿ, էջ 35], **եղբայր>ախպեր**՝ «Յայլա սարի նվախոր օրիշ պյան ա, այ **ախպեր**» [ԼԿ, էջ 35], **ղջ>խճ՝ աղջիկ>ախճիկ**՝ «Էն **ախճկան** շատ հավան ա իմ նանի» [ԳՄ, էջ 134], **ղձ>խձ՝ դաղձ>տԱՄ խձ**՝ «Մեր **տախձյուտի** մեծ գյունում, քերծից քերծ թոչող ջեյրան» [ԼԿ, էջ 105] և այլն: Հավելենք, որ առնմանությամբ ձևավորված օրինակները, համապատասխանելով ոճական նորմայի պահանջներին, հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին և տեղայնացված չեն, ուստի, կարծում ենք, դրանք բարբառայնություններ համարել չենք կարող:

Ուշագրավ են նաև Գուսանի քննվող տաղերի լեզվանյութում տեղ գտած տարբեր հնչյունափոխության ենթարկված մասնավոր դեպքերը: Տաղերում գործածված **խօխա** տարբերակը ձևավորվել է **երեխայ**-ից հետևյալ հաջորդական զարգացմամբ՝ **երեխայ>ըրախա//րախա**, ապա՝ **հ**-ի հավելմամբ՝ **հըրախա**, որից էլ **խ**-ի հետընթաց լիակատար առնմանմամբ՝ **խօխա-խօխերք**՝ «Այ նախշուն հարս, **խոխա** վիտանց եմ ճանաչում» [ԼԿ, էջ 90], «Սանամ բաջի, էն աշղը մեր Դադալուն **խոխորցանա**» [ԼԿ, էջ 90]: Տաղերգուի կիրառած բարբառային նյութում առկա է նաև գրաբարյան վերջնահանգ **ն**-ի դրափոխում, օր.՝ **մատն-մանդը**՝ «Միմիս յիրա **մանդրերս** կողվարիլ չի» [ԼԿ, էջ 49]: **Ն**-ի դրափոխում է առկա նաև **յենդան** «ետևից» բառում՝ «Մի եղնիկ ա **ենդան** քարշ տված տանում» [ՄԿ, էջ 114]: Նկատելի է, որ այդ բառի **յետ/ետ** [հնխ.\*pedo-][3, էջ 83] սկզբնաձևին բարբառային տարբերակում նախ՝ ավելանում է վերջնահանգ **նը**-ն՝ **յետնը** [տե՛ս նաև 6, էջ 233], որի ազդեցությամբ **տ**-ն ձայնեղանում է, ապա՝ դրափոխվում **յեդնը>յենդը** :

Ամփոփելով նշենք, որ Գուսան Աշոտի բարբառային տաղերում առկա հնչյունական իրողությունները կազմվել են տարբեր հնչյունական օրենքներով և հնչյունափոխական երևույթներով և բնորոշ լինելով Գորիսի խոսվածքներին՝ ոճականորեն ակտիվ են: Նկատելի է, որ, ի տարբերություն գրական ձևերի, ընդգծված բարբառային տարբերակների կիրառումներն ավելի տեղին են ու նպատակամիտված: Հայտնի է, որ տաղերը ևս ժողովրդական լեզվամտածողության ծնունդ են, ուստի, բնական է, որ պետք է ընդգրկեն տեղային միջավայրը պատկերող բառաձևեր, որոնցով հասարակ շինականի կամ նախրապանի խոհն ու երազանքը, զգացմունքն ու ցանկությունը բնութագրվում են ավելի համոզիչ ու արտահայտիչ, իսկ նրանց առօրյայի ու բնաշխարհի նկարագրության արտացոլումը՝ գրեթե ճշգրիտ ու բնական:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԳՄ-Գուսան Աշոտ, Գուսանի սերը, Ե., 1955, 127 էջ:  
 Հ-Աշուղ Աշոտ, Հավերժություն, Ե., 2010, 192 էջ:  
 Ծ-Գուսան Աշոտ, Ծովաստղիկս, Ե., 1989, 264 էջ:  
 ԼԿ- Գուսան Աշոտ, Լեռները կանչում են, Ե., 1988, 184 էջ:  
 ՄԿ-Գուսան Աշոտ, Միրո կրակներ, Ե., 1971, 131 էջ:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղաբեկյան Մ., Հանեյան Ա., Ուռուտյան Ռ., Հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը, Հայերենի բարբառագիտական ատլաս, Եր., 2010, պրակ 3:
2. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Եր., 1973:
3. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր., 1977:
4. Կոստանդյան Դ. Մ., Խոտրջուրի բարբառային յուրահատկությունների լեզվաաշխարհագրական բնութագիրը, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ուսումնասիրություններ և նյութեր, պ. 2, Եր., 1985:
5. Ղազարյան Ռ.Ս., Ավետիսյան Հ. Մ., Միջին հայերենի բառարան, Եր., 2009:
6. Մարգարյան Ա., Գորիսի բարբառը, Եր., 1975:
7. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1997:
8. Մարգարյան Ա., Ստուգաբանություններ, Եր., 2015:

9. Մելքոնյան Ս.Ա., Ակնարկներ հայոց լեզվի ոճարանություն, Եր., 1984:
10. Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս.Ա., Ղարազուլյան Թ. Ա., Լեզվաբանական բառարան, Եր., 1975:
11. Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, Եր., 2013:

#### РЕЗЮМЕ

#### Фонетические реалии в диалектных стихах Гусана Ашота Светлана Манучарян

**Ключевые слова:** стихи, фонетические законы, чередование звуков, говоры Гориса, диалектизмы, выпадение звуков.

Фонетические реалии в диалектных стихах Гусана Ашота представляют собой проявления фонетических законов и фонетических изменений армянского языка, которые вообще характерны диалектам ветви Ум [Ում]. Фонетические и звуковые явления, характерные для говоры Гориса и Карабаха (закон Ачаряна, гармония гласных, палатализованные согласные, фонетические изменения под предпоследним ударением, анаптиксис и выпадение звуков), создают фонетические диалектизмы в стилистике стихов. Диалектные варианты фонетических реалий придают художественному образу поэзии Гусана естественность и выразительность.

#### SUMMARY

#### Phonetic Realities in Gusan Ashot's Dialectal Taghs Svetlana Manucharyan

**Keywords:** a verse, the phonetic laws, a phonetic change, the idioms of Goris, the dialecticism, sound disappearance.

Phonetic realities found in Gusan Ashot's dialectal taghs are the manifestations of different phonetic laws and sound-exchanges of the Armenian language which are generally typical for the dialects of «ում» [um] branch. Phonetic and sound-exchange phenomena of Goris and Karabakh's idiolects (Acharyan's law, harmony of vowels, consonant palatalization, sound-exchange caused by final stress, sound addition and emission) by stylistic usage create phonetic dialectal phenomena in the taghs. The dialectical version of phonetic realities gives naturalness and expressiveness to the artistic image of the Gusan's verse.